

Մատենան է Աւետարան.

1. Թղ. 2բ. Թուղթ Եւսեբեայ առ Կարպիանոս. եւ Համարարաւորք:

2. Թղ. 7բ. Նախադրութիւն Մատթէի եւ Յանկ զլիւոյ: Թղ. 9ա Համաձայնութիւն չորից աւետարանչաց:

3. Թղ. 10ա. Մատթէոս:

4. Թղ. 98բ. Նախադրութիւն, Գլուխք, Մարկոս:

5. Թղ. 156բ. Յարուցեալ Յիսուս առաւաւտուն միաշարաթուն — որ երթայր զհետ նոցա:

6. Թղ. 157բ. Նախադրութիւն, Գլուխք, Ղուկաս:

7. Թղ. 254բ. Նախադրութիւն, Գլուխք, Յովհաննէս:

8. Թղ. 326. Իրք կնոջն շնացելոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. Թղ. 326բ. 328ա. Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Աստուածային ծագումն մշտնջենաձագ լուսոյն ի ստորինս ծագելով. լուսաւորէ՛ առ հասարակ զամենայն զգալիս: Իսկ լոյս ծայրական՝ ծանեալ զպատգամ պատուիրանի՝ տեառն, ըստ ա՛յնմ պատուիրանք տեառն լոյս եւ խրատ, յանդիմանութիւն եւ կեանք: Եւ լոյս են հրամանք տեառն ի վերայ երկրի, յուսուցանել զարդարութիւն բնակչաց երկրի: Բայց առաւել լուսաւորէ՛ զմե՛ր իշխանական՝ աւետարանս, ա՛յս ինքն՝ աւետի՛ք կենաց: Վասն զի ի քաղցու կերակրէ՛ եւ ի ծարաւու արբուցանէ՛ իբրեւ յորդեակս զթայ: մեծամեծաց՝ ա՛հ հարկանէ, եւ զաղքատս սփոփէ՛: ճանապարհորդաց՝ ընդ առա՛ջ ելանէ եւ յասպնջականս բարեբաւոյ: Կրանաւորաց քաջալերութիւն, եւ միանձնացելոյ ամո՛ւր ասպատանի: մանկանց զատկարա՛կ եւ ծերոց մխիթարութիւն: մեռելոց յո՛յս յիշատակի: Դարձեալ կոչի աւետարանս. զի սովա՛ւ հին եւ անշարժ չարիքն քակտեցա՛ն: անէծք աւրիւնացն ի միջո՛յ բարձան: մահու ջիւր հատա՛ն: մեղք լուծա՛ն, երկնից կամարքն փռեկացա՛ն¹, անկոխ ճանապարհն Աղեւնայ մարդակոտոր աւազակաւն բացա՛ն: մարդիկ ընդ հրեշտակս խառնեցան, եւ ամենեքեան ուսեա՛լք յաստուծոյ եղեն:

¹ Գրուած փռեկացան, ա ուղղուած է:

Այսմ.² լուսաւորէ՛ մարդարտի, փափաղաւղ եղեալ, քահանայս աստուածամեծ եւ առաքինադարձ՝ Գրիգոր՝ կոչեցեալ՝ ստացաւ զոսա՛ զաւակ ի Սիրով, եւ ընտանի յերուսաղէմն երկնաւոր, ուրախութիւն եւ յոյս հոգւոյ, եւ պսակ եւ փառք եւ յիշատակ զինի մահու: Արդ ո՛վ քահանայք աստուածասէրք՝ յորժամ ընթեռնուք եւ լուսաւորիք յաւուրս տաւնից տարեկանաց, անմոռաց յիշմամբ յիշեցէք յաղաթս զյառաջացեալ շնորհազարդ քահանայն զԳրիգոր, համե՛ստ կենակցա՛ւ իւրով (անուան մը համար բաց տեղ) եւ գրոյրն իւր զՀաղորմիկ՝ զհրաժարեալն յաշխարհէ: Նա՛ եւ զհայրն իւր զՅովհաննէս զփոխեալն ի Քրիստոս, հանդերձ ամենայն փոխեցելովք, քահանայի՛ւք եւ աշխարհայնովք. եւ զհոգեւոր եղբայրն իւր զՅովաննէս՝ զբրտնաջան վաստակաւորն. որ սատարեաց մասն ինչ ի զինս աւետարանիս: զի աղաւթիւք ձերովք գրեցիք ի զիրն կենդանակա՛ն. եւ յերեւումն յամեցելոյ փեսային երկնաւորի ընդ աջո՛յս հասեցին. աղաւթիւք եւ բարեխաւսութեամբ ամենայն սրբոյ: ամէն: Բայց գրեցաւ տառս աստուածախաւս. ի քաղաքս Ղրիմ. յեպիսկոպոսութեանն տէր Ստեփանոսի արհի՛ առաջնորդի. եւ յաթոռակալութեանն ամենայն հիւսիսական կողմանց տեառն Յովհաննիսի ուղղադաւան եւ բարեփա՛ւ հոգեւորի: ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի արազահա՛ս սուրհականի: ի թուականութեանս հայկազնեայ ՊԼԳ: Ձեռամբ մեղսամակարդ եւ մեղաւոր հոգոյ Ստեփանոս գրչի. բե՛ւր քանքարոյ պարտականի: եւ զհայրն իմ զՆատե՛ր Ժրաջա՛ն գրիչ մարբն իմով, եւ զեղբարսն իմ, զԱւետիս գրիչ եւ զՅովաննէս հրաշագա՛րդ մեղանաւոր. եւ զԳրիգոր եպիսկոպոս Սաղաւեայ գաւառի, քուերբքն իմով, որ են այժմ ի մեծ ժողովն: զի թերեւս հանգիպեցին աղաւթիւք ձերովք ողորմութեանն Աստուծոյ. յայնմ աւուր ուր բանք սպառին եւ զործք թաղաւորեն: Յիշեալք զարձեալ ի պատկանաւոր աղաւթս ձեր զորդեակն իմ զՅոհաննէս նորընծայ քահանայ, որ աշխատեցաւ յոսկի եւ ի ծաղիկ սրբոյ աւետարանիս:

2. Թղ. 328ա. Արդ՝ այսմ վերջի ստացողի եւ քրիստոսադաւան սուրբ աւետարանիս ցանկացող եղեալ ծառայս Աստուծոյ եւ

² Գրուած այսր սրբագրուած մ:

սուրբ աւետարանչացս, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու եւ ամենայն սրբոց երկնաւորացն եւ երկրաւորացս, մղտեսի Սաղարչաս որդի՛ Մարտիրոսին: Որ ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոյ: Զի ետու զանցաւորն եւ առի զյաւիտենականն: Ըստ տեառն հրամանին որ ասէ՝ Մի գանձէք ձեզ գանձ յերկրի: որ ցեց եւ ուտիչք ապականեն: Այլ գանձեցէք ձեզ գանձ յերկինս՝ որ ոչ ցեց եւ ուտիչք ապականեն: Դարձեալ ուր գանձք ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին:

Դարձեալ ետու զսուրբ աւետարանս ի նորաչէն սուրբ ուխտն յանուն ամենասուրբ փրկչին՝ ի Պոնտոս քաղաքի Տրապէզ կոչեցելոյ: Ի հայրապետութեանն տեառն Պաւլոսի. ի թաղաւորութեանն Յունաց Կիր Ալեկսի. եւ որդոյ նորին Կալօխանին. եւ ի թաղաւորութեանն Վրաց յազգէն Բագրատունեաց, ընտրեալ քաջ եւ յաղթող տղայ հասակաւ թաղաւորութեանն Ալէքսանդրի:

Շինեաց հոգեւոր հայրն մեր եւ բարեպաշտ եւ քրիստոսադաւան խօճայ Ստեփանոսն ըզվանքս զսուրբ Ամենափրկիչն յիշատակ իւր եւ համեստ կողակցին իւր Մելքիայ խաթուն, եւ հաւրն իւրոյ պարոն Ամիրզէկին, եւ ամենայն արեան մերձաւորաց. եւ ի յարեւաշատութիւն որդւոյ Նոր պարոն Մկրտչին: եւ զստերն Նոր Հաստատայ խաթունին. եւ սիրելի փեսային խօճայ Ամիր Շամշատինին: եւ որդւոյ նորին Սաշատրին:

Աղաչեմ զձեզ ով կրօնաւորք եւ քահանայք կարգացող սուրբ Աւետարանիս՝ յիշման արժանի արարէք զմեղուցեալ ծառայս զմղտեսի եւ զանարժան [329ա] զՍաֆարչաս. զհայրն իմ զՄարտիրոսն եւ զծնողաւթ հօրեղբայրն իմ զՍարգիսն: եւ զմայրն իմ ըզՍէտայ խաթունն զփոխեցեալսն առ Քրիստոս: զընդուն իմ զԱղուծ³ խաթունն: եւ զքաւրոջ որդին իմ զՅախրատինն. եւ զայլ ամենայն արեան մերձաւորս զկենդանիս եւ զհանգուցեալս. ամէն: Եւ Քրիստոս սո հասարակ յիշողացէ՛ եւ յիշեցելոցդ ողորմեցի ամէն: Գրեցաւ յիշատակարանս ի յաստուածապահ քաղաքս ի Կաֆայս ի թվ. ի Հայոց ՊՀԲ: Փետրուար ամսոյ Գ: Ըզմեղաւք իրի զՍտեփաննոս (Ջննւած ա-

³ Գրուած զԱղաւթ, ուղղուած ու:

նուն մը եւ այս գրուած) զինդրող բանի՛ զմիջնորդ եւ գյորգորիչ սուրբ աւետարանիս յիշեալք միով տէր ողորմայիւ: Եւ աստուած որ առատն է ի տուրս բարեաց յիշեցէ՛ զձեզ յիւր միւսանգամ զալստեանն, ամէն:

3. Թղ. 1ա (չղագիր).

Գրգատուն եղբարց:

1839, մայիս 1.

ի Տրապիզոն.

Գրեցաւ ի զպրատան Պօնտոսի Հայոց կաթօլիկաց ի ձեռն պարոն Կիրեղեան տիրացու Յովհաննէսին որդւոյ իշխանապետին ի սոյն քաղաքի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, ի թաղաւորութեան օսմանեան տէրութեան սուլթան Մահմատի եւ ի քահանայապետութեան սրբոյն աթոռոյն Հոռվմայ տեառն Գրիգորոսի եւ հայրապետութեան սրբոյն աթոռոյն Յիսուս փրկչին Կոստանդնուպոլսոյ տեառն Պօղոսի Մառուշ կոչեցելոյ եւ ի պատրիարքութեան տեառն հայր Կարապէտի Եսայեան եւ յառաջնորդութեան տեառն Յովհաննու Ղարա Կիրեղեան իմաստասէր վարդապետի, եւ ի վարժապետութեան ի սոյն զպրատան տիրացու Պօղոսի Անոյշեան. ուսանին յայսմ զպրատան ի սոյն ժամանակի մանկունք ութսուն եւ հինգ. տասն ի նոցանէ զաստու քերականութեան եւ հինգն պարապեալ յուսումն հոգեւորականին. եւ այլքն յայլ եւ այլ գիրս սարթափին:

Dio mio

3.

ՀԱՇՈՑ ԵՐՈՒՍԱԳԵՄԵԱՆ

Թ. 1: — 1302:

ԹՈՒՂԹՔ՝ 231: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 36,6 × 30,3 հմ: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ 27,7 × 21 հմ: — ՆԻԻԹ՝ հաստ ողորկուած բուրդ: — ԿԱԶՄ՝ դեղնաւուն կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, բայց ունի բերի կողմեր. քղ. 227—231, ստորին լուսանցք բերի ցեցակեր. 1—2, 230—231 ստորին լուսանցքն նորոգուած. քղ. 69 կիսով պատած, նորոգուած, բայց անգիր: Թուղթեր ինկած 2՝ սկիզբէն, 1՝ ընդմէջ 68/69, 1՝ ք. մ. 79/80, 3՝ ք. մ. 93/94, 1՝ ք. մ. 99/100 եւ 211/212: Դատարկ քղ. 77բ: — ԳԻՐ՝ մաքուր խոշոր բոլորգիր: — ԿԻՍԱՆՈՐԱՆԻԿ մը քղ. 25ա: Կան հնամտիկ լուսանցադարձ տեղ տեղ: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ ցանցաւ: — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՒ ՍԿԶԵՆԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳԻՐԶ՝ Տիւնք քաղաւայ: — ՏԵՂԻ՝ փերուծ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1302: 1617ին ուղարկուած Հռոմ, Ս. Մարիամ Եգիպտացոյ Եկեղեցին:

Մատենան է նրուսադէմեան ճաշոց: Սկիզբէն ինկած են 1 եւ 2 թերթերը, այն է 24 թուղթ. այժմ կը սկսի թղ. 1ա: «Քանդի արդար էր եւ ոչ (կամէր) առակել զնա» (Մատթ. Ա. 19): Եւ երանեն յեկեղեցին եւ սան զերեկոյն պաշտաւն. յարեան ի նոյն (եւ այլ գրչէ) զհսկումն. եւ ի հսկմանէն ընթեռնուն ընթերցուածք թի: Եւ նախ առ Սաղմոս. Կց. Յիշեա տէր զԴաւիթ: Ընթերցուած (ծ)ննդոց սկիզբն. ի սկզբանէ արար Աստուած զերկինս...: Վջ. թղ. 231ա—բ. վեցերորդ Կիրակէին առաւաւտուն. Աւետարան ըստ Դուկասու. Եւ յասել ոմանց զտաճարէն... Պաւղոսի առաք. ի Կո(ղ)ոսացոյ թղթոյն. Զդոյշ լերուք, մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ...: Ալէլուիա. Աւետարան որ ըստ Մատթ. իսկ փարիսեցիքն իբրեւ լուան... զի առէք, որ երգնու ի տաճարն չէ ինչ. հոս կ'աւարտի ձեռագիրս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. թղ. 197բ. Փառք համադոյ եւ միանական երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յամի 20Մ. (1302) Հայոց թուականի յանկ ելեալ աւարտեցաւ աստուածախաւս մատենան, որ կոչի ընթերցուած, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի լուսաւորութիւն մանկանց Սիրիւի: Բայց արդ զերեցաւ սա ձեռամբ յոգնամեղ եւ անարհատ զրչի եւ անարժան քահանայի Տիմաթի, ի խնդրոյ պատուական քահանայի Յակոբա յաշխարհիս Իտալացոյց ի քաղաքս որ կոչի Փերուս, ընդ հովանեաւ սրբոյ աւետարանչիս Մաթէոսի: Արդ աղաչեմ զամենեւեան, որք հանդիպիք այսմ տառիս տեսութեամբ կամ ընթերցմամբ, յիշեալիք ի մաքուր աղաթս ձեր զվերոյդերան զՅակովբ, զվերաւանուչ տանս Հայոց: Նաեւ զպատուելի քահանայ զԹորոս եւ զեղբայրն մեր Վարդան եւ զայլ միաբան եղբայրութիւնս եւ որք աշխատել են ի սմա. եւ որ յիշէ եւ ողորմի առէ, զտցէ զողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ:

2. Վերջին կողի ներսի երեսին վրայ. Questo libro è stato scritto nel anno secondo l'Armeni 751 et del sig. et a. 1617 sono appunto 315 anni. Ասոր տակ նոյնը հայերէն, նոտրագիր:

Գրեցաւ զիբըս ի թվն. Հայոց 20Մ. որ այժմ ԳՃԺԵ տարի է որ է ՌԿԶ. փառք Աստուծոյ մերոյ:

առեւոյ. Յիսուսի Քրիստոսի. mano di Thimoteo sacerdote Armeno.

Շղագիր՝ Տոմինկոս Եակոբոս Մարթոս յարքերիսդոսոս Մարաղէսիս:

Այլ գրչէ նոտր. Սուրբ Մարիամու Եղիպտացուն:

Codice di Lezionario scritto Roma sopra, l'Anno Armeno 751, (a cui corrisponda l'Anno del Sig. non già 1617, come sopra, ma sibene 1302) trasportato da dalla chiesa di S. Matteo Vangelista di Perugia a S. Maria Egiziaca di Roma dopo esser si mancati colà gli Armeni. Ed il Notatore dicendo sopra, che quasi do notata erano anni 315. Sa questi aggiungiamo all'Anno Armeno 551, l'anno 1066, della traslazione, cioè l'An. del Sig. 1617.

Ա. Կողիմ ներս. Evangelij et epistole si legono l'anno nel uffitio delli Armeni. No. 30:

Այս եւ նոյնանման յիշատակադրութիւններէն կը տեսուի թէ ձեռագիրս, որ կը պահուէր Փերուսի Ս. Մատթէոս եկեղեցւոյ մէջ, 1617ին յանձնուած է Ս. Մարիամ Եղիպտացւոյ եկեղեցւոյն, եւ ընդունած է թ. 30:

4.

ՃԱՇՈՅ ՀԱՅԱՊԻՐ

ԵՒ ՀՈՌՈՍՄԱԴԻՐ

Թ. 2: — 1230:

ԹՈՒՂՈՒՔ՝ 259: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 34 X 25: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ Երկսիւն, 25,5 X 17,3: — ՆԻԻԹ՝ քուրք. նորոգուած քուրքերն՝ մագաղաք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ ընդհանրապէս. քղ. 1—2 վերին եւ ստորին լուսանցներն եւ մասամբ բնագիրն ցեցակեր. քղ. 46—49, 130—139 մագաղաք: Սկիզբէն 7 քուրք ինկած: — ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր. նորոգուած մասերն սովորական բոլորգիր: — ԼՈՒՍԱՆՑԱՐԱՐԳ՝ հնադար, գումար: — ԳՐԻԶ՝ Գրիգոր: — ՏԵՂԻ՝ երգնակ, Կապուի վանք: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1230: Ա. Կողի ներսին կողմը լատին լեզուով մագաղաք մը փակցուած:

Մատենան է Գրիգորիս Վկայասէրի եւ Կիրակոս վարդապետի պատրաստած ճաշոց գիրք:

Հայադիր: Սկիզբէն 7 թուղթ ինկած, այժմ կը սկսի...: լուսարուք զբանս այս փըրկութեան... (Գործք Առ. ԺԳ. 27):

Բ. Նորին (Նաւասարդի) Թ. Սրբոց Աստուծանց. Սղմ. Ե. Տէր որպէս զին. բանից: Պաւլ. ի Կորն ընթ. Յամենայն ժամ զմահն Յիսուսի...: Ալէ. Սղմ. Ի. Տէր զաւր.

քում: Աւետ. Մատթ. Ահաւասիկ եւ առաքեմ...:

Թղ. 127ա. Գրիգորիս Վկայասէրի Յիշատակարանը. Այս ինչ կայ ի գիրս. եւ այս է Յիշատակարան տաւնից տէրունականաց եւ սրբոց Աստուծոյ...:

Թղ. 127բ—128բ. (Յիշատակարան Կիրակոս վարդապետի). Եւ Կիրակոս տրուպ զիտնական...:

Այս երկու յիշատակարանները հրատարակուած են այլ եւ այլ անգամներ. զերջին անգամ Հանդ. Ամս. 1952, էջ 521—522 = Ակինեան, Մատենադրական հետազոտութիւններ. հատոր Ե. (Վիեննա 1953), էջ 296—299:

Հոռոմադիր: Թղ. 149ա. Յունուարի Ա. Սրբոյն Բարսղի եւ Գրիգորի Նիւսապետի եւ Եփրեմի: Սղմ. ՃԼԱ. Յիշեա Տէր զԴ. Կց. Քհնք քո զ...:

Վերջ՝ 257ա. Նորին (Դեկտեմբեր) ամսոյ ԻԹ. Յակոբու առաքելոյ եւ Յոհաննու աւետարանչի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ. 1. թղ. 258ա. (2Լուսարին նորոգման ժամանակ արտադրուած բնագրէն). Փառք ամենասուրբ երրորդութեանն եւ մի աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Բայց զերեցաւ աստուածային զանձս ի տաւնայիմբութիւն սրբոյ մարտիրոսաց, ի թուականութեան հայկազեան տումարի. ՈՂԹ. ի լեւոնս սուրբ Լուսաւորչիս յանապատիս որ կոչի Կապոսի. հրամանաւ պատուական քահանայիցն Վարդանայ եւ Սարգսի, որ են ի զաւառէն Եկեղեցաց, ի զեղջէն որ կոչի Իշխա: Եւ զմտաւ ածեալ զձգնութիւն սրբոյ մարտիրոսացն եւ զսէր սրբոցն զերկիւլ ամենայն կարեաց ի բաց մերժեցաք եւ ստացաք զսա մեզ ի ժառանգութիւն եւ յիշատակ ամենայն զարմից մերոց: Արդ աղաչեմք զամենեւեան որք աւտուր ի սմանէ, ուսանելով կամ կարգաւով, կամ աւերինակաւ, յիշեալիք ի Քրիստոս, որ աղաթիւք սրբոց մարդարէից, առաքելոց եւ մարտիրոսաց, ողորմեսցի եւ թողութիւն չնորհեսցէ Վարդանայ եւ Սարգսի, եւ հաւր եւ մար իւրեանց, Սոսթանիսի եւ Ազգկանն եւ հոգեւոր զաւակացն Աթանասի եւ Յովսեփայ քահանայից եւ պատանեկին Յուսկանն: Յիշեա Քրիստոս Աստուած ի քո արքայութիւնդ զՎարդան եւ զՍարգիս, զԳրիգոր եւ զԹորգ հարազատ եղբարք, եւ զեղբրեր մեր զՏիկ-

նացն եւ զԿանացն եւ զփեսայնին մեր զԻնքնատիոս եւ զԹիողոս եւ զՈվանէս խնամին մեր: Տէր Յիսուս ողորմեա զերկոցս ի սմա եւ թողութիւն չնորհեա սոցա, եւ ինձ Միթարայ, որ զսակաւ յիշատակս զերեցի. ողորմեա Տէր եւ քէզ փառք յաւիտեանս ամէն:

2. Թղ. 45բ. Ով աստուածասէրք եւ աստուածապաշտք որ ժողովեալ էք կառարել զտաւն պայծառակերպութեանն Քրիստոսի, յիշեալիք զթշուառականս զԳրիգոր զրոյ, բարի յուսով եւ սիրով. եւ ասասլիք. Քրիստոս քո սուրբ պայծառակերպութեամբդ ողորմեա. եւ որք զմեզ յիշեն. եւ քեզ փառք այժմ յաւիտեան:

3. Թղ. 126բ. Գրիգոր ամենաթշուառ զրիչ զամենայն ժողովեալքս աղաչեմ, մեղաց թողութիւն խնդրեցէք ի սուրբ երրորդութեանն ինձ եւ իմոցն. եւ ձերացն: Քրիստոս զձեզ յիշէ. իւր ողորմութեամբն:

4. Թղ. 257բ (բոլորգիր). Լեւոն չնորհաւրն Աստուծոյ եւ աւանականութեամբն նորին թագաւոր ամենայն Հայոց, որդի հանգուցեալ արքային Հեթմոյ, վասն խընդրոյ Յոհաննիսի քահանայի, պարգեւեցաք զժամագիրքս զայս իւր եկեղեցւոյն սուրբ Մատթէոսի աւետարանչի, որ է ի Փերուս քաղաք, ի յիշատակ մեր եւ նախնեացն մերոց: Ի թվականութեանս Հայոց. էՃԻԼ:

5. Ասոր տակ լատին գոթիկ գրով յիշատակադրութիւն մը:

6. Աւելի վար. Յիշեալիք եւ զիս զՀեթում նուաստ սարկավ. ով սուրբ ընթերցողք եւ զեղբայրն իմ զԴուկաս քահ. եւ զԱւչին սրկ. եւ որք յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւերհեալ յաւիտեանս. ամէն:

7. Թղ. 258բ. Աղաչեմք յիշել ի Տէր եւ զվերջին ստացողք զրոցս զսրբասնեալ զքահանայքս զՅակոբ ծերունին եւ զԲասիլ զհոգեւոր որդին իւր զվերաւանուչք տանս Փերուսի եւ սպասաւորք սուրբ առաքելոյն եւ աւետարանչին Մաթէոսի: Յիշեցէք եւ զձգնազգեսց կրաւնաւորն Ֆրանզ զկաղմող եւ զնորոգող զրոցս: Յիշեցէք եւ զզրոյ սակաւ յիշատակիս, եւ զամենայն եղբայրութիւնս ի բարին Քրիստոս. եւ Աստուած յիշելոցս եւ յիշողացդ առ հասարակ ողորմեսցի:

8. Թղ. 258ա մագաղաթեայ, զանազան զրերով յիշատակադրութիւններս.

Յանուն Աստուծոյ Մայստ Արարին որ արար ողորմութիւն ի սուրբ Մաթէոս սկի մի ու զէկէնէր. Բրիստոս արասցէ իր բարի հատուցումն:

Յակոր նոտարն, որ արար զսուրբ Մաթէոս իր ապրնացն չորրորդ բաժնին ժառանգ. Բրիստոս զնա արասցէ յաւիտենից կենացն ժառանգորդ:

Մունալա Բառլէթ գործն որ զգետին էրէտ ի սուրբ Մաթէոս. Բրիստոս նմա տա զերկիրն կենդանեաց:

Անճուրց փոնպանն, որ էրէտ զ: Ժ: լիւր ի սուրբ Մաթէոս չէնքն. Բրիստոս նմա տա տեղի հանդիստ:

Ճերն ու իր հայրն Պէթ ու մայրն Լիւպա, որ ալին պատարագի մոմ: Բրիստոս զնոսա լուսաւորէ:

Կօն որ բէրին վասն իւր հողոյն բէրնմ քախցու: Բրիստոս նմա արուցանէ բաժակ կենաց:

Պէչլօ մարքաթանթ, որ էրէտ. Գ. լիւր: Բրիստոս նմա ողորմեացի:

Օրմանն էրէտ: Ժ: լիւր: Բրիստոս արասցէ նմ(ա) քաղցր դատաստան:

Դանա Աւրէթան. եւ Տէր ողորմեացի նմայ:

Յրանդ փութալէր (°): զ: լիւր: Ժ. ե. սաւլ ողորմութիւն երէտ: Աստուած իւր հոգոյն առնէ ողորմութիւն յաւուրն աներկի:

Ես Աննէս: Մսեր Պաշմին. մատաւնա Մելտին ու ճուանէս որ տուաք սկի ի սուրբ Մաթէոս. որ լինի(ն)ք մասնակից աղաւթից եւ պատարագաց:

Պիռնտուլայի. ողորմի Աստուած իր հոգ(ոյն). չաւլըն թողել է. Իե. սաւլ:

Թղ. 259ա. Մսէր ճուան Դեուս կաւալէր ձեզ աղաւթին անձին է:

Մանրագիր. Epistole et evangelij quotidiani per tutto l'anno.

Միջակ գրով այլ գրէէ. Codice Lezionario di Rito antico Armeno dell'Offizio, e Messa di tutto l' Anno, del pugno, come pare, di Gregorio Patriarca II, morto nel 1105, il quale lo arricchè di più Santi con le rispettive Lezioni, prendendoli dalla chiesa Greca. E questo Codice il Re Armeno Leone III. di Cilici lo ha dedicato alla Chiesa Nazionale di S. Matteo Vangelista degli Armeni di Perugia a Richiesta di D. Giovanni l'A. 1279, come nel suo monumento posto sul penul-

timo foglio. Mancati poi gli Armeni in detta città, è stato mandato a Roma con altri Codici.

Ասոր տակ, առանձին թղթի վրայ գրուած եւ կպցուած, նոր շղարկի (կը թուի Վենետիկի Միթրարեան Հարց մէկէն). Հ. Մ. Աւգերեան տեսած է ձեռագիրս:

Վրկակ է կարծիքս. նախ զի յետոյս մատենիս զոյ թուական զրութեան սորա 1220 (կարդա՛ 1230) ՈՀԹ: Երկրորդ՝ զի այլ է գրիչ սորա, եւ այլ յօրինիչ, սակայն համոզուածութիւն նոցա տեղի տայ շփոթութեան: Եւ երրորդ՝ զի Գրիգորս այս յօրինիչ եւ կարգաւորիչ ընթերցուածոցս ոչ է Վկայասէրն առանձին՝ որ մեռաւ յամին 1105, այլ երկրորդն Վկայասէր, եղբայր Շնորհաւոյն՝ որ եւ Գրիգոր Գ. որ մեռաւ յամին 1165:

5.

ՄԱՇՏՈՅ

Թ. 29: — 1683:

Թ. ՈՒՂԹՔ՝ 207: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 18 X 11,7: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ, հնացեալ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ Ա. քերքը ինկած: Թղ. 1 պատառաւուն, քղ. 2—4 խոնարհեմէ վնասուած: — ԳԻՐ՝ բալորգիր: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԵՐ եւ ԶԱՐԳԱԳԵՐ կամ: — ԳՐԻԶ՝ անյայտ: — ՏԵՂԻ՝ Տաքեւ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1683:

Մատենա է Մաշտոց, որ կը բովանդակէ:

1. Թղ. 1ա. այժմ կը սկսի Դրոշմի խորհուրդէն:

2. Թղ. 6ա. Կանոն Նշան աւրհնելոյ: Ասէ Շր. խորհուրդ անձառ...

3. Թղ. 9բ. Կանոն հանդերձ Հարսանեաց օրհնել: Եւ ասին երրորդ ժամն (զԳանձա) խաչանշան զրոշմամբ նշանաւ պարակրական փառօք զարդարեալ... (տունք՝ խաչատուր ՈՆՀՈՇԱ (Թղ. 9բ—10բ): Թղ. 14ա. Փետայիս եւ հարսին խրատն եւ քարոզն այս է. ի ժամ հարսանեաց քարոզէ եւ ասէ. Զինչ որ առաքեալքն եւ հայրապետքն զրեւ են Կանոնքս, այսօր ձեզ յայտնի կանեմ առաջի Աստուծոյ...:

Թղ. 17բ. խրատ զգուշութեան զոր տացէ քահանայն հանդերձելոցն ատուկ առնել կանխաւ...: Գիտաւձիք, որդեակ, որ հանդերձեալ էք կապիլ ընդ միմեանս լծով օրինաւոր ամուսնութեամբ...: Թղ. 23բ. Եւ ասին զերգս աւրհնութեան պսակին.

Ամենագոր տէր թաղաւոր թաղաւորաց, թաղաւորիս մեր զղեցոյ հանդերձ փառաց...:

4. Թղ. 36ա. Կանոն պսակ վերացուցանելոյ:

5. Թղ. 37բ. Կանոն հաղորդ տալոյ:

6. Թղ. 41բ. Կանոն մեծաթաղն (մեռեւաթաղի). յորժամ զամենայն ննջեցեալսն ի Բրիստոս յուղարկեն:

7. Թղ. 56ա. Գանձ թաղման ննջեցեալոց. Մինդ ի յէէն, բանդ ի սկզբանէ... (Տունք՝ Մանվէլս):

8. Թղ. 59բ. Ողբ ննջեցեալոց. Ով քահանայք եւ վարդապետք աստուածաբանք...:

9. Թղ. 60ա. Կանոն Աղալացին:

10. Թղ. 65բ. Կանոն եւթն աւուրն:

11. Թղ. 72ա. Կանոն Տղայ թաղելոյ:

12. Թղ. 86բ. Կանոն Հոգեհանգիստ առնելոյ:

13. Թղ. 91բ. Կանոն Տեառնական:

14. Թղ. 96բ. Կանոն Խաչ օրհնելոյ:

15. Թղ. 110բ. Կանոն Զուր օրհնելոյ:

16. Թղ. 123ա. Կանոն Եկեղեցւոյ պղծելոյ յանօրինաց եւ շարժեալ Սեղանոյ վերստին հաստատել: Մտանէ կախիկապոսն յեկեղեցին հանդերձ քահանայիւք եւ սարկաւաղօք եւ հրամայէ զատակ եկեղեցւոյն... լուսանան:

17. Թղ. 132բ. Կանոն Աւաղան օրհնելոյ:

18. Թղ. 136բ. Կանոն յորժամ Նոր Դուռն զնեն եկեղեցւոյն:

19. Թղ. 137բ. Կանոն հանդերձ սպասու եկեղեցւոյ օրհնելոյ:

20. Թղ. 138ա. Կանոն Ըսկի եւ զմաղղման օրհնելոյ:

21. Թղ. 138բ. Կանոն Ժամահար օրհնելոյ:

22. Թղ. 140ա. Կանոն Սերմն եւ Շեղջն եւ հնձան օրհնելոյ:

23. Թղ. 142ա. Աղօթք վասն Երաշտի:

24. Թղ. 142բ. Աղօթք որ պիղծ ինչ կերեալ իցէ:

25. Թղ. 143ա. Կանոն Նոր Գիրք օրհնելոյ:

26. Թղ. 144ա. Կանոն Խաչալուսայ առնել:

27. Թղ. 146բ. Կանոն Ոտնալուսա առնելոյ:

28. Թղ. 158բ. Աւետարան Իւղաբերից:

29. Թղ. 165բ. Աւետարան Բժշկութեան:

30. Թղ. 166ա. Աւետարան Պաշտաման:

31. Թղ. 170ա. (Գուրգայք). զապաշխարդն:

32. Թղ. 191ա. Կանոն Մեծի Եչին վասն արձակելոյ:

33. Թղ. 206ա. Գանձ Մանկանց տղայոց. Արթուր զուարթունք, Բանին բանաւոր ծիծուռնք... (Ա—Բ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. Թղ. 206բ. Փառք...:

Ի թուականութեան Հայոց ՌՃԼԲ (1683) ի թաղաւորութեան Պարսից շահ Սուլէյմանայ, ի հայրապետութեան էջմիածնեա տեսուն Եղիազարու բաղմահանձառ եւ միամիտ կաթողիկոսի. եւ ի մերումս նահանգի Ստաթէի սուրբ առաքելոյն Յոհաննիսի արքեպիսկոպոսի արի եւ քաջ (սրբա)անեալ վարդապետի, ի սոցին ժամանակի ցանկացօղ եղեալ|||:

2. Թղ. 206բ. անվարժ նոտրագիր գրէէ. Թոռանն Պաղտատարին մա (նա) եւ ծօռանցն Գրիգորին, Քատուն, Նազուն Մայրամին թիւ. ՌՃԽԹ (1700) էր Շայապակս (°). Ես Գարբիէլս զերեցի այս գիրս:

3. Թղ. 207ա. Յիշատակ է Մաշտոցս Բրի որդի Աթանասին եւ որդոցն նորին եւ կողակցուն. որ ես ի դուռն սուրբ Վարդանայ զօրավարին ՌՃՂ եւ Թ (1750) թվի:

6.

ԿԱՆՈՆ ՄԻՒՌՈՆ ՕՐՀՆԵՔԻ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՆՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Թ. 22: — ԺԹ. դար:

Թ. ՈՒՂԹՔ՝ 76: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 21,5 X 17,5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԿԱԶՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ լաւ: Դատարի քղ. 14—22, 63բ—76: — ԳԻՐ՝ նոտր-շղագիր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Մատենա է Միւռոնօրինէֆ եւ Քախապակամ ձեռնագրութիւն:

1. Թղ. 1ա. Կանոն օրհնութեան սուրբ Միւրոնին. Յաւուր մեծի Հիւղաբարթօջն, որ է հին զատիկ օրինական եւ ի նորս փոխեալ Բրիստոսի: Ընդ առաւօտն մտանէ կախիկապոսն յեկեղեցին...:

2. Թղ. 8ա. Երկուք ի քահանայիցն ասին զքարոզս ձայնիւ, զոր առաքեալ է տեսուն Ներսիսի ըստ անուան իւրոյ. Նոր օրհնութիւն ընդ հայցուածոց մաղթանայ

մատուցանեմք առաջի քո, Հայր անսկիզբն... (տունք՝ «Ներսէսի երգ»):

3. Թղ. 12ա—13բ. Կանոն օրհնութեան ձիթոյ հիւանդաց: Ի պատարագիլ եպիսկոպոսի, յառաջ քան զՀայր մերն, բերեն առաջի զՀիւ ձիթոյն հիւանդաց եւ երգմանեցուցանեն զնա այսպէս. Երգմանեցուցանեմ զքեզ...:

4. ա. Թղ. 23ա. Սկիզբն աստիճանաց կղերիկոսաց որք են Սաղմոսերգութեան (Ա—Դ աստիճանք):

բ. (Թղ. 28բ). Ե. Կարգ Կիսաասարկաւազաց:

գ. (Թղ. 31բ). Կանոն 2. աստիճանի, յորժամ Աւագ սարկաւազ ձեռնադրեն:

դ. (Թղ. 40բ—63ա). Կարգ կոչման ի քահանայութիւն, զոր պարտ է կատարել ի նախնիքաց երեկոյի ձեռնադրութեան յետ երեկոյեան ժամերգութեան: Նստեալ եպիսկոպոսն յաթոռ առաջի սրբոյ սեղանոյն առասցէ զկոչումն այսպէս. Գան երիցունքն առ զուռն տաճարին ի ներքս...:

7.

ՇԱՐԱԿՆՈՅ

Թ. 41: — ԺԴ./ԺԵ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 375: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14.5 × 9.8 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ, այժմ միայն առաջին կողմ մնացած, քայքայուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ քղքեր ինկած. ապա նորոգուած եւ լրացուած. դարձեալ քղքեր ինկած: — ԳԻՐ՝ բուրգիք: — ԿԻՍԱՆՈՐԱՆՆԵՐ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԵՐ եւ ԾԱՂԿԱԳԻՐՆԵՐ՝ պարգ: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆՆԱԿ՝ անյայտ: — ԿՈՂԻՆ ՆԵՐՍԸ՝ Գրեատուն եղբարք:

Մատենան է Շարակնոյ:

Թղ. 1ա. Սկիզբն թղթեր ինկած, Թղ. 1—2 նորոգողէն: Թ. 3ա. Կանոն Յովակիմա եւ Աննայի ծնաւազաց Աստուածամուրն, Որ նախնիքաց... Թղ. 372բ. (նորոգողի դրէն) Շարակն սրբոյ Ղեւոնդեանց: Վերջը պակասաւոր:

8.

ՇԱՐԱԿՆՈՅ

Թ. 46: — ԺԴ./ԺԵ:

ԹՈՒՂԹՔ՝ 275: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12.9 × 8.8 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ չուրի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ ցեցակեր. կազմը քայքայուած, քուրքեր ինկած: Արդէն եին ժամանակ նորոգուելու տեսած, ինչ ինչ քուրքեր լրացուած: — ԳԻՐ՝ բուրգիք ընտիր: Ունի պարգ եւ գումաւոր ԿԻՍԱՆՈՐԱՆՆԵՐ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԵՐ, ԶԱՐԴԱԳԻՐՆԵՐ: — ԳՐԻԶ՝ Յովհաննէս եպ.: — ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆՆԱԿ՝ անյայտ: Ստացիչ՝ Եսայի կրօնաւոր:

Մատենան է Շարակնոյ: Սկիզբն, մէջէն եւ վերջէն թղթեր ինկած:

Թղ. 173բ. Որ ըզհնայեալ ժեղաւք եւ զանախտան ի դործոց բարեաց, զՅոհանէս անարժան եպիսկոպոս զծող սորին յիշեսցիք. ընդ նմին եւ զԵսայի բարեմիտ կրանաւոր զստացող սորին. եւ որ յիշէ յիշեալ լիջի ի Քրիստոսէ:

9.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

Թ. 13: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 163: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23 × 15.6 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆՆԱԿ՝ անյայտ:

Մատենան է՝ Պատմութիւն Հայոց արաբեալ տեսողն Յովհաննիսի գերիմաստ եւ երջանիկ Կաթողիկոսի ամենայն Հայոց: Աշակերտի եւ ազգականի երանելոյն Մաշտոցի սրբոյ հայրապետի Հայոց ազգի: Որ եւ ըստ իւրում իսկ յօրինողի, անուանն կոչի Յովհաննէս Պատմադիր...:

Թղ. 2ա. Յօհաննէս Հայոց Կաթողիկոսի յառաջարան Պատմութեան: Չղադարումն դարուց, ժամուց եւ ժամանակաց...: Վջ. Յօհաննէս նուազաւ Կաթողիկոս Հայոց ազգալէմ:

10.

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

Թ. 17: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 115 (իջաւամբ 233 + 6): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22 × 15.5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. դատարկ՝ 3 բուրք: — ԳԻՐ՝ շղագիր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆՆԱԿ՝ անյայտ: — ԿՈՂԻՆ ՆԵՐՍԸ՝ պիտակի վրայ՝ ի գրեանց Տ. Յովհ. Կիրակ. 1860:

Մատենան է Յովհ. Կաթողիկոսի Պատմութիւնն Հայոց, չուրի խորագիր. բովանդակութիւնն նոյն Թ. 9ի հետ:

11.

ԱՆԴՐԵՅԻ ԿԵՍԱՐԱՅԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Թ. 16: — 1796:

ԹՈՒՂԹՔ՝ 46: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21.8 × 16.2: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 43բ—46: — ԳԻՐ՝ նոսր: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ գումաւոր քղ. 1ա: —

ԳՐԻԶ՝ Մանուկ: — ՏԵՂԻ՝ Կ. Պալիս: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1796:

Մատենան է Տեսութիւն Յայտնութեան Յովհաննիս՝ Անդրէի արքեպիսկոպոսի Կեսարու, Թարգմանութեամբ Ներսէսի Լամբրոնացոյ:

Թղ. 1ա. Ի տիեզերական ժողովոյն կամս, որ եղեւ յաստուածապաշ քաղաքն Կ. Պալիս, Յայտնութիւնն Յովհաննէս ընկալեալ եղեւ...:

Թղ. 2բ. Ի Յայտնութիւնն Յօհաննէս սրբոյ հօրն մերոյ Անդրէի երանելոյ եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկացոց համառօտ տեսութիւն...:

Թղ. 42ա. Յիշատակարան Ներսէսի Լամբրոնացոյ:

Հրատ. Երուսաղէմ 1855:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 42բ. Իսկ նարգենիս վերստին օրինակեցաւ ի մեղսաների զբաւէր մանկավարժ դարձի ի Կոստանդնուպօլիս, ընդ հովանեաւ մայր սուրբ Աստուածածին եկեղեցոյ ի Թուրն Հայոց Ուժնե (1796) սեպտ. յաւուր տօնի Ս. Վերացման խաչի...: Քանզի գոյով իմ յայսմ ժամանակի մանկավարժ դրէթէ Հե կամ Զ աշակերտ լեալ միայն Աստուծով էի. բայց տենչումն սորին բորբոքելը ի միտս իմ, ուստի գողացեալ զժամանակն ի մանկավարժութեանս՝ սմա ծախեցի. ի յոյժ փափաղմանէ սրտիս, վասնորոյ անմեղադիր լերուք: Վերջ:

Մանուկ զբաղիր. մանկավարժ դիր

Որ եմ մեղսակիր, յեցեալ ի յերկիր:

Զեռագիրս անանուն անձ մը համեմատած է Անտոնեան Հարց Թ. ԺԹ ձեռագրին հետ եւ լրացուցած թերի տեղերը:

12.

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻՈՅ

Թ. 15: — 1826:

ԹՈՒՂԹՔ՝ 76 (իջաւամբ 152 + 30 դատարկ): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22.7 × 16 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Դատարկ էջ 153—182: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ՝ Յովհ. Բախանայ Կիրակեան: — ՏԵՂԻ՝ Տրապիզոն: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1826: — ԿՈՂԻՆ ՎՐԱՅ՝ ի գրեանց Տ. Յովհ. Վ. Կիրակեան, 1860:

Մատենան է Խորհրդածութիւնք Ներսէս Լամբրոնացոյ:

Թղ. 1ա. Գիրք որ կոչի Խորհրդածութիւն. շարադեալ ի Տն. Ներսէս Լամբրոնացոյ յարքեպիսկոպոսէ Տարոսնի Կիլիկիոյ...: Գաղափարեալ եղեւ յօրինակէ միոյ ձեռամբ տեսողն Յովհաննէս Կիրակեան յետին քահանայի Տրապիզոնցոյ: Յամի Փրկչին մերոյ 1826, յամսեանն Փետրվարի 15, ի Տրապիզոն:

Թղ. 2ա. Յառաջարանութիւն հեղինակի սրբոյ մատենիս:

Այս բանք եւ աստուածային օրինադրութիւնք...:

Վերջ. «Լ. Ուստի՞ եմուտ այս սովորութիւն...»:

13.

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ ԵՐԱՅԵՑԻՈՅ

Թ. 28: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 50: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19.5 × 14 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ լաւակալ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր-շղագիր: — ԳՐԻԶ եւ այլն անյայտ: — ԿՈՂԻՆ ՎՐԱՅ՝ ի գրեանց Տ. Յովհ. վարդապետի Կիրակեան. 1860:

Մատենան է. «Ինքնահար օրէնք եւ արարողութիւնք եւ սովորութիւնք ազգին երրայեցոց»: Ա—Լ գլուխք:

14.

ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՐԱՊԵԶՈՆԻ

Թ. 14: — 1828:

ԹՈՒՂԹՔ՝ 62: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24 × 17.5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԿԱԶՄ՝ խաւափառ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ոչ լաւ: Գրքին կէսէն վար քափուած է քայքայեալ, որուն հետեւութեամբ վնասուած է գրութիւնը. մասամբ միայն գումատուծ, եւ մասի մը գրուածքը անընթեռնի: Դատարկ՝ քղ. 5բ—46բ. 50—62: — ԳԻՐ՝ նոսր: —

Մատենան է «Տարեգրութիւն եկեղեցւոյն Տրապիզոնի ի յելից 1820 տարւոյ»: Կը հասնի 1828 սեպտ. 2:

1820 ղեկաւ. 20. Ամուսնացաւ Հատիկեան Աղամ ընդ զստեր Մոսոյի Մարեմայ...:

Աղա՝ Թղ. 4բ. 1830 մարտ 30. զատարկ: Աղա՝ Թղ. 5ա. 1831 յուլիս 15: Կը վերջանայ տարեգրութիւնը:

Թղ. 47ա. Նուիրատութիւնք:

Թղ. 48ա—49բ. Աստ յայտնին դրամք հասեալք յառաջնորդ ի ժողովրդենէ մերմէ սկսեալ յամէ 1824(—1828): Մտից հաշիւը:

15.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՆԲ
ՅԱՂԱԳՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Թ. 3: — ԺԸ/ԺԹ դար:

ԹՈՒՂԹՐ. 97: — ՄԵՐՈՒԹԻՒՆՆ. 27.8 × 18 հմ.: — ՆԻԻԹՐ. քուրք: — ԿԱՁՄՐ. քարակազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔՐ. լաւ: — ԳԻՐՐ. նոսր: — ԳԻՐԻՉ. ՏԵՂԻ անձամբ: — ԺԱՄԱՆԱԿՐ. ԺԸ—ԺԹ դար: — Ա. կողմն ներքը՝ պիտակա. ի գրեմնց Տ. Յովհաննէս վարդապետի կիրքեղեմն. 1860:

Մատենան է Աստուածաբանական վիճմունք յաղագս Եկեղեցւոյ եւ զլիաւորութեան Հոռոմայ Բանաստեղծութեան:

Էջ 1. ԳԼ. Ա. Յաղագս ճշմարիտ ծանօթութեան Եկեղեցւոյ. այսինքն թէ զինչ իցէ Եկեղեցին: Անունն «Եկեղեցի» որ առեալ է ի յունական բառէս «էքլէզիա»...:

Էջ 15—18. ԳԼ. Դ. Արդեօք եկաց քննարկեալ... Եկեղեցի Բրիտանոսի մի միայն, ընդհանրական...:

Էջ 18—37. Յաղագս մոլորութեան Կարճիկ Մանուէլին եւ Համարոհից նորա, որով ուրանան ի սպառ զընդհանրական եւ զառաքելական Եկեղեցին Բրիտանոսի:

Վերջին գլուխն է «Ժ. Յաղագս պէսպէս առթից եւ պատճառաց մոլորութեանց Կարճիկ Մանուէլին»:

16.

ՍՏԵՓԱՆՈՍԻ ԴԱՇՏԵՑԻՈՅ ԸՆԴԴԵՍ
ԿՈՉՆԱԿ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԳՐՈՅ
ԿՈՉՆԱԿ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Թ. 4: — 1838:

ԹՈՒՂԹՐ. 50: — ՄԵՐՈՒԹԻՒՆՆ. 27 × 18,3: — ՆԻԻԹՐ. քուրք: — ԿԱՁՄՐ. խաւաքտեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔՐ. լաւ: — ԳԻՐՐ. նոսր: — ԳԻՐԻՉ. անձամբ: — ՏԵՂԻՒ. Արք. վիճմ: — ԺԱՄԱՆԱԿՐ. 1838:

Մատենան է Ստ. Դաշտեցւոյ Պատասխանատուութիւնը Յովհ. Զուլֆաբեցւոյ «Կոչնակ ճշմարտութեան» գրոյ:

Էջ 1. «Կոչնակ ճշմարտութեան» անուանեցաք զայս... յորում պարունակին վիճաբանութիւն տեառն Յովհաննիսի Զուլֆաբեցւոյ... Մըքուլ կոչեցելոյ ընդդէմ Կաթողիկէ Եկեղեցւոյ Լատինացւոց եւ Յունաց երկաբնակաց: Եւ պատասխանատուութիւն Ստեփաննոսի ուրեմն... զաշտեցւոյ... Առ խելամուտութիւն Համալեւոյ իմոց ձօնեմ թէ զՎարդապետին եւ թէ զմեղապարտիս, որք աւանդիկ հանդէպ իրերաց եղեալ երեւին մին եւ միւրն:

Յաղագրանութիւն պատասխանատուութեան Ստեփաննոսի... Դաշտեցւոյ առ տէր Յովհաննէս վարդապետն...: Արդ այսուհետեւ զհետ երթիցուք...:

Էջ 100. Եւ այս բաւականացի ի մէջն... Ստեփաննոս Բատիլիոս Շիւրփալակեան (°), ի Դաշտէն Գողթեաց, սերունդ յԱսպահանայ... որ սկիզբն կալայ խօսել ընդ զեռահոգեկալ վարդապետիս յամի Փրկչին 1714 ի մուտս ապրիլի ամսոյն եւ յաւարտ ամի ի թուին 1715 ի փետրվարի Հոռոմայեցւոց ըսկորան ի վայրս Հնդկաց ի Բանա(ա)րի Սուրբ անուանեալ նաւահանդիստ. իսկ ի թուին Հայոց ՌՃԿԳ. յունուարի. Ի. աւարտ սորին...:

Յիշատակարան զըջին. «Ի նոր գրոյս յաւարտ սորին իսկ թուին ամի Փրկչի 1838 յունիսի 26ին»:

Գրչութիւնը շատ սխալաշատ: Համեմատել վիեննայի Թ. 284, Թղ. 62ա—177ա. եւ Թ. 251, Թղ. 50ա (Տաշեան), Յուցակ, էջ 643, 709:

17.

ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՅԱՐՁԱԿ
ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆՑ

Թ. 5: — ԺԸ/ԺԹ:

ԹՈՒՂԹՐ. 47: — ՄԵՐՈՒԹԻՒՆՆ. 26 × 18,6 հմ.: — ՆԻԻԹՐ. քուրք: — ԿԱՁՄՐ. սպիտակ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔՐ. լաւ. տեղ տեղ ցեցակեր: Դատարկ՝ 1, 44բ—47ա: — ԳԻՐՐ. նոսր: — ԳԻՐԻՉ. Միլիոն Ղալփապեան: — ՏԵՂԻՒ. Արք. վիճմ: — ԺԱՄԱՆԱԿՐ. ԺԸ/ԺԹ դար: Ա. կողմն ներքը պիտակա. «Ի գրեմնց Տ. Յովհ. Վ. կիրքեղեմն. 1860»:

Մատենան է Աստուածաբանութիւն:

1. Թղ. 2ա. Յաղագս աստուածային րացարձակ կատարելութեանց, այս ինքն աստուածային ստորոգութեանց: Ա. վիճաբանութիւն. Յաղագս աստուածային զոյութեան եւ միութեան: Ա. խնդիր. Ա. եղբայրացութիւն. Գոյ Աստուած. է հիմն հաւատոյ մերոյ...:

Յաջորդ Բ.—Է. վիճաբանութիւնը, Յաղագս երանելի տեսութեան. Գիտութեան, Կամայն, Ամենասուրբ Երբորդութեան, Աստուածային մարդեղութեան, Հրեշտակաց (Թղ. 4բ—47):

2. Թղ. 47բ. (Տաղ).
Աստուածածին ամէնօրհնեալ,
յերկրէ յերկինս հարս ընծայեալ,
Դու սափոր ոսկի
մանանայի՛ւ լցեալ:

Բանն Աստուած ի քէն ծնեալ...

Յօրինեալ յանարժան տիրացու Մեղքոնէ Ղալփապեան Արթվինցւոյ: (Հինգ տուն):

Ա. կողմն պահպանակ թուղթին վրայ.
Յ. ա. յուլիսի Մաքիւլեցի Պետրոսին 345 զչ.:

18.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՇԱՐՄԵՍԻ

Թ. 8: — 1782:

ԹՈՒՂԹՐ. 174: — ՄԵՐՈՒԹԻՒՆՆ. 24,2 × 18 հմ.: — ՆԻԻԹՐ. քուրք: — ԿԱՁՄՐ. կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔՐ. լաւ: — Դատարկ սկիզբը՝ 4, մէջը 3 + 10, վերջը՝ 12 քուրք: — ԳԻՐՐ. նոսր: — ԺԱՄԱՆԱԿՐ. 1782: — ԳԻՐԻՉ եւ ՏԵՂԻՒ անձամբ:

Մատենան է Աստուածաբանութիւն:

Ա. էջ 7—171, վիճաբանութիւն Ա. Յաղագս զինչութեան եւ բաժանման աստուածաբանութեան. Աստուածաբանութիւնն ըստ ստուգարանութեան անունն է բան զԱստուծոյ...:

Էջ 153—171, վիճաբանութիւն Զ. Յաղագս հերետիկոսական նախադասութեանց վճռոյ:

Էջ 171. Այս գործ բովանդակ է Համառօտութիւն Ա. Հատորի Աստուածաբանութեան Շարմէսի, յորում պակասին միայն երկու ինչ, այսինքն զզուլութիւնն եւ ծանօթութիւն ի թարգմանել եւ ի մեկնել զղիւս սուրբս հոյ եւ նորոյ Կաակին, յայտարարութիւն երբայական ոճոյն, եւ զասակարգութիւն սուրբ պապիցն:

Վախճան Ա. Հատորին. դատարկ էջ 172—174: էջ 175. Յաղագս շնորհացն Բրիտանոսի, վերջ 215:

Բ. մասն, էջ 7—128. խնդիր նախընթաց. Յաղագս Աստուածաբանութեան: ԳԼ. Ա. Յաղագս առարկայի աստուածաբանութեան:

Էջ 128. «1782, ի հոկտ. 7»:

19., 20., 21.

Հ. ԹՈՎԱՄԱՅԻ ԳԱՐՄԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թ. 9—10—11: — 1824:

ԹՈՒՂԹՐ. 405 (էջ 410 + 150 + 250): — ՄԵՐՈՒԹԻՒՆՆ. 24,5 × 18,3 հմ.: — ՆԻԻԹՐ. քուրք: — ԿԱՁՄՐ. քարեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔՐ. լաւ: — ԳԻՐՐ. նոսր-շղակի: — ԳԻՐԻՉ՝ Հ. Գեորգ Սրապեան: — ՏԵՂԻՒ Տրապիզոն: — ԺԱՄԱՆԱԿՐ. 1823—1824:

Մատենան է Հ. Թովմայի Գարմեան Ընդհանուր Բարոյական Աստուածաբանութեան քարգմանումութիւնն ի ձեռն Հ. Գեորգ Սրապեանի, որ բաժնուած է այլեւայլ հատորներու: Ունինք Դ. Ե. Եւ Զ. հատորները երեք ինքնակաց հատորներու մէջ, որոնք թիւ կը կրեն 19 (9), 20 (10) եւ 21 (11): Յուցակին մէջ կը ցուցակագրենք երեքն ի միասին: Երեք հատորներն ալ ունին մի եւ նոյն վերնագիրը ի բաց առեալ թարգմանութեան տարիները:

Թղ. 1ա. Ընդհանուր աստուածաբանութիւն ի գործածութիւն համբալաց սըրբազան աստուածաբանութեան. աշխատասիրեալ ի զերպատիւ Հ. Թովմայի Գարմեան ընդհանուր վերակացու է ի դաւառական մեծաւորէ Կապուլէչինաց: Հատոր Դ., որ բովանդակէ զճառս յաղագս Մարդկային գործոց, յաղագս Օրինաց, յաղագս վիճակաց եւ Մեղաց: Տիպ Դ. ի վէնէտիկ:

Թարգմանեալ ի լեզուէ լատինացւոց ի հայ բարբառ աշխատասիրութեամբ Հ. Գեորգեայ Սրապեան Անկիւրացւոյ յետին կրօնաւորէ որ ի Միաբանութենէ հարց լիբանանեանց. յամի 1824, ապրիլի 19. իսկ ըստ Հայոց ՌՄՀԳ. ի Տրապիզոն:

1. էջ 1. «Ընտիր եւ զեղեցիկ աշխատասիրութիւն բովանդակ բարոյական աստուածաբանութեան: Ճառ Ա. Յաղագս Մարդկային գործոց...»

Ի ստորեւ՝ «1823 հոկտ. 9» այսինքն՝ թարգմանութիւնը այս թուին սկսուած է:

Թ. 20. Հատոր Ե. որ բովանդակէ զճառ առաքինութեանց ի հասարակի եւ ի մասնաւորի:

Թարգմանութեան տարին է «Յամի 1825, յուլի(սի) 11. իսկ ըստ Հայոց ՌՄՀԳ. ի Տրապիզոն»:

Թ. 21. Հատոր Զ. «Թարգմանեալ սեպտ. 22. իսկ ըստ Հայոց ՌՄՀԳ. ի Տրապիզոն, (սկսեալ 1822, դեկտ. 14):

22.

ՅԱՅՏՆԻ ԱՊԱՅՈՅՑ

Թ. 12: — 1815:

ԹՈՒՂԹՐ. 78 (էջ 156): — ՄԵՐՈՒԹԻՒՆՆ. 24,7 × 18 հմ.: — ՆԻԻԹՐ. քուրք: — ԿԱՁՄՐ. կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔՐ. լաւ, տեղ տեղ ցեցակեր եւ մկնակեր (ի լուսանցս): — ԳԻՐՐ. նոսր: — ԳԻՐԻՉ եւ ՏԵՂԻՒ անյայտ: — ԺԱՄԱՆԱԿՐ. 1815 մարտ 4:

Մատենան է Շարունակութիւն կամ հաստատութիւն յառաջագոյն զրեալ մե-րումս տեսարանի, կամ Յայտնի ապացոյց նոր հերձուածող լինելոյ վերապատուելի Հայր Միքայէլի Չամչեանց, եւ բոլոր Միաբանութեան իւրոյ. քաղեալ ի բուն ձեռագիր զրուածոյ իւրոյ՝ զոր իբր հրաշխեք ձեռնարկ ձեռս մեր՝ յամի 1815: Մարտի 4:

Հեղինակի անունը չէ յիշուած:

23.

ՀԱՅԵԼԻ ԱԶԴԵՅՈՒԹԵԱՆ

Թ. 18: — 1781:

ԹՈՒՂԹՔ՝ 235: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 22 × 15,5: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ կամ, էջ 10 ծաղիկ մը: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆՆԱԿ՝ անյայտ: — Ի գրեանց Յովհ. Վ. Կիրեան, 1860:

Մատենան է՝ Հայելի ազդեցութեան, յորում ցուցանի թիւրութիւն տեսարակին կոչեցելոյ Գաւազան կրկնադօր, առ ի զգաստութիւն եւ յուղղութիւն հեղինակի նորա Սրմաքէշ Մանուէլի: Արարեալ յամենայն ճշմարտասիրէ... յամի Տեառն 1781, ի Թուականիս Հայոց ՌՄԼ:

1. էջ 1. Կանխաբանութիւն առ Սրմաքէշ Մանուէլին:

2. էջ 468. Բանք ինչ ոտնաւոր արարեալ ի հեղինակէն:

Ի քոյ մանեալ զանխուլ տառի,

Ամբող զործոյս զիմաւորի...

Վջ. Գաբրիէլի տեսիլն ի յիս

Թէ Մանուէլ յուշի լինիս:

Հեղինակն է Հ. Գաբրիէլ Աւետիքեան:

24.

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆԱ-ՀԱՐՅ

Թ. 26: — 1825:

ԹՈՒՂԹՔ՝ 180: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 20 × 11,7 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշի կամ, վնասուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ Յովհաննէս Կիրեան: — ՏԵՂԻ, ՏԵՂԻ Տրապիզոն: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1825: — Կողմ վրայ պիտակ «Ի գրեանց Տ. Յովհ. Վ. Կիրեան, 1860»:

Մատենան է «Գործածութիւն խոստովանահարց առ բարեգ լսելոյ զխոստովանութիւն. շարադրեալ յերանկելոյն Ալիոնսոսէ Լիզորեան...: Զգուշաւոր թարգմանութեամբ հեղաւ ի հայ բարբառ աշխատա-

սիրութեամբ Հ. Գէորգեայ Սրապեանց Գաղատացոյ, որ ի Միաբանութենէ միանձանց Ս. Անտոնի մեծի, որ ի Լեւոն Լիւրանան... յամի 1818, օգոստոս 13. իսկ ըստ Հայոց ՌՄԿԻ ի Կ. Պօլիս: Օրինակեցաւ ի Տ. Յովհաննէս Կիրեան յետին քահանայէ յամի Տեառն 1825, նոյեմբ. ի Տրապիզոն»:

էջ 335. «Բան թարգմանչի». ուր կ'ըսուի թէ զործիս կցուած է Հ. Թովմա Գարմեան կապուելինեանի Աստուածաբանութենէն թարգմանելով՝ էջ 337—356 «Կանոնք ապաշխարութեան ըստ կարգի տաաբանեայ օրինայ»:

25.

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՕՇՔԱՅԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թ. 27: — 1728:

ԹՈՒՂԹՔ՝ 410: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 19,2 × 15: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ մաքուր նոսր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ, անյայտ: — ՏԵՂԻ՝ Ստանիսլաւով: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1728:

Մատենան է «Բարոյական աստուածաբանութիւն Ստեփաննոսի Ստեփանեան Ռօշքայ սրբադանի Աստուածաբանութեան վարդապետի կամենացոյ ըստ զերմաստ վարդապետացն հարազատ իմացուածոյն հանդերձ զիսկուածոյն մեկնութեամբ համառօտեալ: Մասն Ա. ի Ստանիսլաւով. Յամի Տեառն 1728: եւ Հայոց ՌՃՀԷ:

Թղ. 383բ—409 Յանկ նշանաւոր իրաց:

26.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՆԴԻՐՔ

Թ. 39: — 1829:

ԹՈՒՂԹՔ՝ 118: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 14,9 × 10,2 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ՝ Յովհ. Վ. Կիրեան, ՏԵՂԻ՝ Սաքալիս: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1829: — Ի գրեանց Տ. Յ. Վ. Կիրեան, 1860:

Մատենան է. «Բարոյական խնդիր՝ համառօտաբար ծաղկաքաղ արարեալք ի պէսպէս երեւելի եւ ընդունելի եւ հաստատուն հեղինակաց. եւ ի մի զիր բովանդակեալ յօդատակէր անձնէ ումենէ: Օրինակեալ եղեւ վերստին ի զրչադիր օրինակէ միոյ՝ Տեառնէ Յովհաննէս քահանայէ Կիրեան Տրապիզոնցոյ, յամի Տեառն 1829 եւ ըստ Հայոց ՌՄՀԷ. ի Սաթալա:

27.

ՀՈՈՄԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

Թ. 31: — ԺԹ:

ԹՈՒՂԹՔ՝ 114: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 18 × 12,7 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆՆԱԿ՝ անծանօթ: — «Ի գրեանց Տ. Վ. Կիրեան, 1860»:

Մատենան է «Մասն երկրորդ Հոռուէական վարդապետարանի»:

Թղ. 1ա. Գլ. Ա. Յաղաքս խորհրդոց համօրէն:

Թղ. 81ա. Համառօտ ճառ բարոյական աստուածաբանութեան ի զարգացումն խոստովանահարց:

28.

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏ. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Թ. 37: — ԺԹ:

ԹՈՒՂԹՔ՝ 87 + 48 դատարկ: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 16,9 × 10,4 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կիսալաւ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆՆԱԿ՝ անծանօթ:

Մատենան է «Բացատրութիւն քրիստոնէական վարդապետութեան»:

էջ 1—6 կանխաբանութիւն:

29.

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԳԼԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՀՈՈՎԱՄԱՅ

Թ. 43: — 1824:

ԹՈՒՂԹՔ՝ 101: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 14,5 × 10: — ՆԻԻԹ՝ քուղք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԿԱԶՄ՝ խաւաքաղ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ՝ Տ. Յովհ. Կիրեան: — ՏԵՂԻ՝ Տրապիզոն: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1824: «Ի գրեանց Տ. Յովհ. Վ. Կիրեան 1860»:

Մատենան է «Հաստատութիւն գլխաւորութեան քահանայապետին Հոռովայ, թարգմանեալ քաղեալ յընդարձակ աստուածաբանութենէ մեծապատիւ Հ. Թովմայի Գարմեան կապուելինեան վերակացուի: Աշխատասիրութեամբ Հ. Գէորգեայ Սրապեանց Անկիւրացոյ յարգոյ կրօնաւորի, որ ի Միաբանութենէ Ս. Անտոնի արքայի մեծի Լիւրանանց: Օրինակեալ ի տէր Յովհաննէ Տրապիզոնցոյ յետին քահանայէ: Յամի Տեառն 1824 եւ ըստ Հայոց թուարեւութեան ՌՄՀԳ, ի Տրապիզոն:

Թղ. 56ա. «Յաւելուած, յորում ստորադրի օրինաւոր եւ անընդհատ կարգ յաջորդութեան սրբազան քահանայապետաց» (մինչեւ 1775, Պիոս 2.):

30.

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐԻՅ ՎԵՐՋՆՈՑ

Թ. 44: — 1825: 1

ԹՈՒՂԹՔ՝ 54: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 13,8 × 8,5 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ խաւաքաղ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ՝ Տ. Յովհ. Կիրեան: — ՏԵՂԻ՝ Տրապիզոն: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1825:

Մատենան է «Տեսարան չորից վերջնոց. աշխատասիրութեամբ տեառն Յովհաննէ Կիրեան Տրապիզոնցոյ յետին քահանայի: Յամի Տեառն 1823, յամենայն զեկտեմբերի 12: Օրինակեալ երկրորդ անգամ ի նմանէ յամի 1825... ի Տրապիզոն:

Թղ. 2ա. Յառաջարան:

Թղ. 5ա. Հանգէս մահու...: (Աշխարհաբար):

31.

ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ

Թ. 42: — Իբր 1850:

ԹՈՒՂԹՔ՝ 428 (էջ 1—12 + 240 + 168 + 8): — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 14,5 × 9 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ: — ԳԻՐ՝ մանր շղագիր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆՆԱԿ՝ անյայտ: — Դատարկ 1—4, 6, 426բ—428:

Մատենան է «Հայելի վարուց սրբոց».

հաւանաբար թարգմանութիւն:

Թղ. 5ա. Յառաջարան: Թղ. 7ա. Հայելի վարուց սրբոց. գլ. Ա. Քրիստոնէութիւն:

Վերջին զուլին է ԿԵ. Արքայութիւն:

Թղ. 425ա—426ա. Յանկ զլիսոյ:

Համեմատէ՝ Գիրք Հայելի վարուց, Կ. Պօլիս, 1702:

32.

ՔԱՐՈՉԳԻՐՔ ԱՂՈՒՀԱՅԻՑ

Թ. 19: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 77: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 23 × 14: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ասկաւ ինչ ցեցակեր: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆՆԱԿ՝ անյայտ:

Մատենան է Քարոզգիրք աղուհայից:

1. Քարոզք Աղուհայի: Քարոզ Ա. յառաջին ԴՆ. որ է օր մոխրոց: Բնաբան. Ողբա

առ իս իբրեւ զհարսն քրջաղլած... Յովել
Ա. 8: Սկսուած. Պատմի ի զիրս, թէ յոր-
ժամ Տիտոս Վեպիանոս էառ զԵրուսա-
ղէմ...:

2. Վերջինն՝ Քարոյ ժ. յաւուր Մեծի
Ուրբաթու երեկոյն, առ թաղումն հրաշալի
մարմնոյն Յիսուսի Քրիստոսի (Վերջաւո-
րութիւնը թերի կ'երեւայ):

33.

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Թ. 20: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 255 (էջ 508): — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝
23 × 18 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱՉՄ՝ չուսի:
— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳԻՐԻՉ,
ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Մատենա է Քարոզգիրք:

Թ. 1ա. Քարոզա(դիրք): ԻԱ. Միւս
օրինակ իմո քարոզիք:

(Ա.) Քարոզ. Անուն Յիսուսի. Բնա-
բան. Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն
ծունը կրկնեցի...: Մասն Ա. Բաղումը ի
մարդարէից... ԼԱ. Քարոզ. Մկրտեցէք
զնոսս յանուն Հօր...:

Սիրել Աստուծոյ առ մարդիք...:

34.

ՎԱՍՅՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԵՄ ՀԵՐԵՏԻ-
ԿՈՍՈՒԹԵԱՆՑ

Թ. 30: — 1850/1890:

ԹՈՒՂԹՔ՝ 55: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 19,50 ×
13,50 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱՉՄ՝ քղբեաց:
— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, լուսամբն տեղ տեղ ցեցակեր:
— ԳԻՐ՝ նոսր: — ԳԻՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ ան-
յայտ, կը բուի 1850—1890 շրջանէն ըլլալ:

Մատենա է Վկայութիւնք ընդդէմ հե-
րետիկոսութեանց արդեան Հայոց ի զրեանց
հարց նոցա եւ յեկեղեցական մատենից:

1. Թ. 4ա. Երկու բնութեան վարդա-
պետութիւն. ա—կ վկայութիւնք.

2. Թ. 9բ. Կրկին կամք եւ կրկին
դործք ի Քրիստոս եւ անգոսնելի կիրք. (Ա—
Խ վկայութիւնք).

3. Թ. 14բ. Բղիւսումն Հոգւոյն սրբոյ
եւ յորդոյ (ա—ծղ վկայութիւնք):

4. Թ. 18ա. Առանձնական դատա-
սան.

5. Թ. 19բ. Քաւարան.

6. Թ. 24բ. Երանութիւն անընդմիջա-
կան զկնի մահուան:

7. Թ. 31բ. Սուրբ տեսանէն զԱս-
տուած յերկինս.

8. Թ. 32. Մեղաւորք ընդ մեռանիլն
խաղոյն ի զժողոս:

9. Թ. 33բ. Զարգարոցն եւեթ զհո-
գիս ազատեաց Քրիստոս ի զժողոս:

10. Թ. 34. Ճշմարիտ եկեղեցի Քրիս-
տոսի եւ նշանք նոյն եկեղեցւոյ:

11. Թ. 37ա. Ս. Պետրոս հիմն եկեղեց-
ւոյ եւ զլուխ:

12. Թ. 43ա. Գերազանցութիւն քահա-
նայապետին Հռովմայ:

13. Թ. 45ա. Ս. Պետրոս ի Հռովմ:

14. Թ. 46ա. Լուսաւորիչ ի Հռովմ:

15. Թ. 47ա. Խորութիւն կերակրոց:

16. 48բ. Ամուրի կեանք եկեղեցակա-
նաց:

17. Թ. 49ա. Եղբարք Տեառն ո՞րք ե՞ր
յի՞նչ միտս ապին:

18. Թ. 49բ. Սրբապաշտութիւն:

19. Թ. 50ա. Զրախառնութիւն:

20. Թ. 50բ. Վերջին օծումն:

21. Թ. 51ա. Մկրտութիւն յաշխարհիկ
արանց վաւեր:

22. Թ. 51բ. Պատարալ արտաքոյ Եկե-
ղեցւոյ:

35.

ՊԱՐՏԵՉ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՃԿԵՐԵՆ

Թ. 40: — 1827:

ԹՈՒՂԹՔ՝ 220: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 14,5 ×
9,4 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱՉՄ՝ կաշի: —
ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳԻՐԻՉ,
ՏԵՂԻ. Ն. — ՏԵՂԻ. Կ. Պոլիս 1827:

Մատենա է Պարտեչ հոգեւոր. Եանի
ռուհանի պահճէ... զբարառ տիլինտէն
թիւրքէյէ թէրճիւմէ օլունտու պիր վար-
ժապտտէն, սէնէ 1803. իւնտէ. վէ սօհրա
օրինակել օլունտու Յ. Է. Ն. տան. սէնէ Իսա
էֆէնտիլիլին 1827 մարտին 16 սընտա:
Ստամպոլ շէհէրինտէ Էաղըլտը:

36.

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թ. 23: — 1728էն յառաջ:

ԹՈՒՂԹՔ՝ 69: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 20,7 ×
14,5 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱՉՄ՝ կաշի սպի-
տակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: —
ԳԻՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Կողմ վրայ
հին քիւ. ԼԱ. — Կողմ ներք. «Մարիամ Եգիպ-
տացուն. 42»: Ուստի փոխադրութեան ժամանակ
նոս մնացած:

Մատենա է Աղօթադիրք, ուր կան.

1. Թ. 1ա. (Աղօթք) վասն ծննդեան.
Տէր եւ Աստուած իմ, քո սուրբ ծննդեամբդ
անճառելի... կից՝ այլ եւ այլ ժամամուտք:

2. Թ. 2ա. Աղօթք Ս. Ոսկերեանին
վասն յետ պատարադին: — Հօր Աստուծոյ
Որդի եւ բան, Յիսուս Քրիստոս եւ տէր
համայն...:

3. Թ. 2ա. Նորին աղօթք Ս. Երեմի
ասացեալ. Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնի
եւ յերկրի, իշխան մահու եւ կենաց...:

4. Թ. 4ա. Աղօթք սուրբ Եփրեմի
հո(դ)եկիր վրդապետի ասացեալ: — Տես,
Տէր (դ)տարապանս իմ եւ զյաւս հոգւոյ...:

5. Թ. 7ա. Նորին Երեմի ասացեալ
աղօթք եւ պաղատանք առ յԱստուած. —
Տէր Աստուած զօրութեանց աղաչեմք...:

6. Թ. 7ա. Նորին աղօթք Եփրեմի: —
Արարիչդ ամենայնի նախախնամող...:

7. Թ. 8ա. Նորին աղօթք Երանելոյն
Եփրեմի: — Տէր Յիսուս Քրիստոս, մի
մտաներ ի դատաստան...:

Թ. 3, 4, 5, 7 աղաղորտեմ Եփրեմ Դ. (Վենե-
տիկ 1836) էջ 252, 227, 257, 256:

8. Թ. 9ա. Աղօթք առ սուրբ Աս-
տուածածինն. Ով ամենասուրբուհի Աս-
տուածածին պարծանք կուսութեան...:

9. Թ. 9բ. Մեսրոպայ վարդապետի
ասացեալ աղօթք եւ աղաչանք ամենասուրբ
կոյս Մարիամ Աստուածածին: — Մարիամ
Աստուածածին մայր լուսոյ...:

10. Թ. 10ա. Բանք մաղթանաց Յօհան-
նու առ սուրբ կոյսն Մարիամ սուրբ Աս-
տուածածինն. Ծնունդ երկրածին եւ ծնող
զամենեւեան ծնողի...:

11. Թ. 12ա. Աղօթք քաղաւածարար
յովբերդութեանց Գր. Նարեկացւոյ:

13. Թ. 13բ. Յովհաննէս Գառնեցւոյ
ասացեալ առ Տէր Աստուած: — Տէր Տէր,
Հայր եւ Աստուած...:

14. Թ. 14ա—21ա. Նորին աղօթք ա-
սացեալ ի վերայ զրոյ անուն իւր. Աղօթք
Կիւրակէի: — Յաւիտենից Աստուած եւ ա-
րարիչ բոլորից:

15. Թ. 21բ. Աղօթք Յօհաննու Ոսկե-
բերանին. Տաճար Աստուծոյ եւ բնակարան
սուրբ Հոգւոյն...:

16. Թ. 21բ. Աղօթք դարձելոյն ի
զղջումն ապաշխարութեան ասացեալ Յո-
հաննու Ոսկերեանին: — Անսկիզբն Աս-
տուած եւ անհասանելի...:

17. Թ. 22բ—24բ. Քաղաւածք ի Նա-
րեկացւոյ:

18. Թ. 25ա. Եռամեծի եւ քաջ վար-
դապետի Մխիթարայ Գոշի... Աղօթք ի ժամ
սուրբ պատարադի: — Տէր Աստուած իմ
Յիսուս Քրիստոս...:

19. Թ. 26բ. Նորին աղօթք Մխիթա-
րայ զէմ պատարադի: — Ամենակալ, ամե-
նախնամ...:

20. Թ. 27բ. Նորին աղօթք Մխիթարայ
զէմ պատարադի. Երեքանձնեայ տէրու-
թեանդ...:

21. Թ. 28բ. Աղօթքներ Պատարադի:

22. Թ. 29բ. Աղօթք Քրիստոսի Տնօրե-
նականաց. ի խորհուրդ Նազարէթի...:

23. Թ. 33բ. Սուրբ վարդապետին Յո-
հաննու Սարկաւադի առ Հայր Աստուած...:
Առատ ամենայն տուրս բարեաց փարթամա-
ցուցիչ...:

24. Թ. 34բ. Նորին ասացեալ առ Որ-
դին սուրբ Աստուած: — Ի լուսոյ ճըշ-
մարտէ...:

Թ. 35—62բ. Այլ եւ այլ աղօթքներ
(Թերեւս Սարկաւադի անխորադիր, վասնզի
խորագիրք պիտի գրուէին կարմրագիր):

26. Թ. 63ա—68բ (անխորագիր) Պատ-
մութիւն Խիկարայ. (Ես) Խիկար դպիր Սենե-
քարիմ արքայի ըստացայ ինձ ծառայ:

27. Թ. 68բ—69ա. (անխորագիր).
Անձն իմ վայճ քեզ հաղար բերան, թէ խոով
կենաս կամ ոխ պահես...: (Մկրտիչ Նա-
ղաշի):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Սկիզբը պահ-
պանակ թուղթի վրայ. «Յիշատակ է Աղօթա-
դիրք տեսն Յակոբայ Կոստանդնուպոլսեց-
ւոյ եւ եպիսկոպոսին Աղանոյ ի դուռն սուրբ
Մարիամ Եգիպտացւոյն. թվին Փրկչին
Ռէճիլ (1728). ապրիլի ժեկին:

37.

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Թ. 24: — ԺԼ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 12: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 21,2 ×
14 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱՉՄ՝ քղբեաց: —
ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ գործածութեմ կեղտոտած: — Դա-
տարկ քղ. 10—12: — ԳԻՐ՝ նոսր:

Մատենա է «Աղօթամատոյց Հիւրանցի
Սրբոյ Մարիամու Եգիպտացւոյ Հայոց որ ի
Հոսմ»:

Յերեկոյն ի միում ժամու գիշերոյ ժողովեալ ամենեցուն ի վերնատան եկեղեցւոյ՝ ասան զհետեւեալ աղօթս (այս ինքն վարդաբան, խորհուրդներով հանդերձ), լիթանիա եւ այլն:

Կը պատկանէր Մարիամ Եղիստացւոյ եկեղեցւոյն:

38.

ՀԱՅԱ ՔԻԹԱՊ (տանկերէն)

Թ. 38: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 238: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 17 × 11,8 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԿԱՅՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Մատենա է՝ Հազա քերթապ զարպի մէսէլ պու տուր քի էվլէլտէն տէնիլէն մէսէլէլէր քիմի կիւլէլէր քիմի էէրէլէր. տէմիլէլէր քի տիւնեա պիր եաղլը քուլլը տուր աղլ օլա քէսիլէլէլէլէլ:

Ա—ՄՂԹ պատմութիւն:

Ա. կողմն երեսը. «Այս գերքս Սէրգիսի որդի Պետրոսին է»: Այլ գրէ. «Այս գերքս Կարապետի որդի Առաքէլ զիրէն»:

39.

ՏԱՂԱՐԱՆ

Թ. 45: — 1704:

ԹՈՒՂԹՔ՝ 21: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 13,2 × 9 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԿԱՅՄ՝ սեւ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԼՈՒՍԱՆՅԱՅԱՐԳՔ՝ տեղ տեղ: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ՝ անծանօթ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1704:

Տաղարանս կցուած է տպագիր մատենին. «Յովհաննիսի վարդապետի Կոստանդնուպօլսեցւոյ Պատասխանատուութիւնը թըղթոյ ուրումն ընդդիմադրականի գրելոյ յեղբարց ոմանց հայկազունեաց: Յամի տեսուն 1687 Վենետիկ»:

1. Թղ. 1ա. Երգ ջերմեանդ առ քաղցրագունեղն Յիսուս:

Թիսուս քաղցրիկ յիշողութիւն,

Տըւող սրտի զստոյգ խնդութիւն...

2. Թղ. 6ա. (ուրիշ գրով) Ուսումն բժշկութեան որ մի ըստ միովէ շարադրեսցուք: Առաջին գմուլայն...:

3. Թղ. 7ա. Խրատ յաղաղս հոգեկանի: Եղբարք ոչ եթէ ձեզ կամիմ թէ հրաժարիք աշխարհէ, քաւ լիցի...:

4. Թղ. 10բ. Ի Յօնան եպիսկոպոսէ ասացեալ: Ի բերմանէ կենցաղական անձա գիպաւ

հիւանդութեան, տարերացս որ չեն միաբան, (Տունը ի Յունանէ):

5. Թղ. 11ա. Յաղաղս Ներողութեան:

6. Թղ. 18ա. (Տաղ). Ընտրեալ ի մէջ հողեղինաց, Մայր միածնին Տեառն փառաց...:

7. Թղ. 20ա. Տաղ Միւթար աստուածաբան վարդ.

Վիրաւորեցայ, մեղօք վարեցայ գերի, Ծուլութեամբ իմով անկայ մէջ մեղաց տղմի:

8. Թղ. 21ա. Ամէնօրհնեալ կոյս անաբատ, մայր եւ ծնող Յիսուսի...:

Վերջաւորութենէն թուղթ ինկած:

40.

ՊԱՐՏԻՉՊԱՆՈՒԹԻՒՆ

Թ. 32: — 1850:

ԹՈՒՂԹՔ՝ 113 (էջ 226): — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 17,3 × 10 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԿԱՅՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ շղագիր: — ԳՐԻՉ՝ 3. Վ. Կիւրղեան: — ՏԵՂԻ՝ Տրապիզոն: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1850: — Կողմն ներք. «ի գրեանց Տ. Յ. Վ. Կիւրղեան 1860»:

Մատենա է՝ Պարտիզպանութիւն, որ բովանդակէ կարծ ի կարծոյ դամենայն կարեւորս ի մշակութիւն պարտիզպ: Յօրինեալ ի Յ. Վ. Կիւրղեան Տրապիզոնցւոյ. ի Տրապիզոն 1850:

41., 42., 43.

ԱՆՈՐԺԱՆՈՒՐՔ

Թ. 33—35: — 1840—1841:

ԹՈՒՂԹՔ՝ Ա. 56 + 55 + 49: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ Ա. 17,3 × 11,5. Բ. 17,7 × 11. Գ. 16,5 × 10,1: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԿԱՅՄ՝ բըղբայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻՉ՝ 3. Վ. Կիւրղեան: — ՏԵՂԻ՝ Տրապիզոն: — ԺԱՄԱՆԱԿ՝ Ա. 1840. Բ. 1841, Գ. (չունի):

Մատենաքս են՝

Թ. 41. Ախորժալուրք կամ Հակիրճ բարոյական պատմութիւնը, որք քաջալերեն զմանկունս ի բարի վարս եւ յառաքինական գործս: Թարգմանաբար հաւաքեալը յայլ եւ այլ գրեանց. 1840 ՌՄԶԹ. ի Տրապիզոն: Պատմութիւնը Ծ:

Թ. 42. Ախորժալուրք կամ հակիրճ եւ հանճարեղ արարք եւ ասացուածք արանց. իմաստնոց ի քաջալերել... Պատմութիւնը ԾԾ:

Թ. 43. Ախորժալուրք. Պատմութիւնը ԾԾ: Թարգմանիչն է անշուշտ Յ. Վ. Կիւրղեան:

44.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՈՐԺԱՆԻ
ՃԻԼ ԲԼԱՍԻ ՍԱՆՏԻԼԼԱՆԵԱՆ

Թ. 36: — 1841^o:

ԹՈՒՂԹՔ՝ 62: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 16,9 × 11,5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԿԱՅՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ հաւանօթն ինչպէս վերք (Թ. 41):

Մատենա է. Ճիլ Բլաս Սանտիլլանեան, Պատմութիւն ախորժալի: Գիրք Ա.—Բ:

Թարգմանիչն հաւանաբար Յովհ. Վ. Կիւրղեան ի Տրապիզոն:

45.

ԲԱՌԳԻՐՔ ԵՐԵՄԻԱՅԻ

Թ. 25: — 1724:

ԹՈՒՂԹՔ՝ 146: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 20 × 15,6 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԿԱՅՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԲՊ. 135բ. տպագիր նկար S. Jacobus Apost. — ԳՐԻՉ՝ Միմաս Շոռլիքի Բարախասեան: — ՏԵՂԻ՝ Աղբիւս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1724:

Մատենա կը բովանդակէ.

1. Թղ. 1. Համառօտ հաւաքումն եւ գումարումն, լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց յումենն է յերեմիայէ բանասիրէ Մեղրեցւոյ:

[Բառք ի գրոց Ծննդոց] Աստուածող առնուն, յաստիս ածել կամ աստ էած. Աստուած տեսող Թարգմանի: Երկին. երկու ինչ, օղ եւ հուր...:

Թղ. 133. Բառք ի գրոց էր ընդ եղբորն (կարդա՛ եղբարս):

Բառք հաւաքուած եւ մեկնուած են Հին Կտակարաններու գրքերու կարգով, առանց ենթադրելու այբուբենական կարգի:

2. Թղ. 136ա—145բ. Վարք սրբոյն Թօմայի Ագլինացւոյ եկեղեցւոյ վարդապետի եւ խոստովանողի, որ է եղբայր ի կարգէն Ս. Տօմինիքօսի. Թարգ(մ)անեցեալ ի Խաչատուրէ Արղրումեցւոյ աստուածաբան վարդապետէ եւ բանասիր(ը)է: — Սուրբն Թօմաս ծնաւ յազնուական արեւնէ...:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆՔ. 1. Թղ. 134ա. Աւարտեցաւ Հին եւ Նոր Կտակարանաց բառքս ձեռամբ անագորոն մահտեսի Մինաս եւեթ առնուն սարկաւազի, Շօռլիքի Բարաքիսեան, գրեցաւ թվին ՌՃՀԳ (1724). եւ յամսեանն սեպտեմբերի հինգումէն. ի մեծի արքայանիստ մայրաքաղաքի Աղբիւսուպօլիս. զրաւ:

2. Թղ. 146ա. Եւ դարձեալ յիշեցէք ի

բարին ձեզ եւ ամենեցունց ծառայ Մարգարէ աստուածաբան վարդապետի սպասաւորի Մինաս սարկաւազ, մահտեսի, Թերապարժ գրչի սրբազան հոգեւոր հօրս իմում, զոր տէր Աստուածն ընդ երկայն աւուրս արասցէ բարեաւ եւ խաղաղութեամբ վայելեացէ. ամէն:

Եղեւ ի արքայանիստ մայրաքաղաքիս Անտրիանուպօլսոյ. գրեցաւ թիւ ՌՃՀԳ. փետրուարի ԻԱ. ունն. ամէն:

3. Թղ. 146բ. Շնորհիւ ամենագործին Աստուծոյ եւ ի թուականութեանս ազգիս արամեան հաղար երկ հարիւրի ժլուծի յարաբարդի, ես յետեալ ծառայս անպարտելի սրբոյ եւ մեծի աթոռոյն էջմիածնի մօրս լուսոյ, եկեալ ի տիս ծառայականի... ընդ Յօհաննէս վարդապետին, որ էր ի քաղաքէն Պոնտոսի, ի յերկիրն Ղուիմու սակս գործառնութեան սրբոյ աթոռոյն ի սուրբ Սարգիս կոչեցեալ եկեղեցին... ընկալայ զաստիճան նախասարկաւազութեան, յունիս Ժ:

Ասոր տակը «Յաղաղս մասանց բանին, որք են ութ...»:

46.

ԲԱՌԱՐԱՆ ԲՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԻՐԱՅ

Թ. 21: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 104: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 22 × 16 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԿԱՅՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. ԲՊ. 1—4, 101—104 դատարկ: — ԳԻՐ՝ շղագիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Ի գրեանց Տ. Յովհ. Վ. Կիւրղեան ի Տրապիզոն 1860:

Մատենա է Բառարան համայնական, ուր կան.

1. Թղ. 5. Չափերուն ու կշիռներուն ցանկը. եւ անոնց համեմատութիւնը տաճկահոսն չափերուն հետ (այբուբենական կաղզով): Ամփօլա կամ ամֆօլա. երկու պօթթէ. եւ կը կշռէ իբր 666 հոխայ...:

2. Թղ. 7ա. Հաւաքումն հայկական բառից: Արեթ, դավ. էսքա: Աղդր, պուտ, քօսչիա: Աղոխ. գօռուք. ալոէսթօ...:

3. Թղ. 12—100. Բառարան այլ եւ այլ նիւթոց, բուսոց եւ այլոց բնական եւ արհեստական իրաց, որք բովանդակին ի մատենի աստ:

Աղինօ, էչ, էչէք, ամենուն ծանօթ կենդանի մը է. եւ իր կաշին կը գործածուի սեկ յօրինելու... (Ա—Յ):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ